

ԾՐԱԳԻՐ

«ՍԻՐՏ-ԹՈՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ: ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Էրեբունի բժշկական կենտրոն») ԵՊԲՀ Հետբուժական և շարունակական կրթության կենտրոնի անխթեզիոլոգիայի և ինտենսիվ թեապիայի ամբիոն) Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Շաբաթ 1	
Օր 1	
10:00-12:30	Գործնական աշխատանք Նախնական գիտելիքների և հմտությունների գնահատում /նախաթեստ/, համայց ինտենսիվ թերապիայի բաժանմունքում(ԻԹԲ), անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում նրանց կառուցվածքը, հիգիենիկ նորմերը, սարքավորումները: Ոչ ռեանիմացիոն բաժանմունքներում սիրտ-թոքային վերակենդանացման և անհետաձգելի բուժօգնության իրականացման կազմակերպչական կանոնակարգերը և առանձնահատկությունները
12:30-13:00	Ընդմիջում
13:00-14:30	Դասախոսություն Մահ: Հասկացությունը, փուլերը, տեսակներն ըստ ծագման: Ուղեղի մահ: Հաստատագրման մեթոդները: Տարիքային խմբերը ՍԹ-Վ-ն տեսակետից: Չափահասների և երեխաների արտահիվանդանոցային և ներհիվանդանոցային գոյատևման շղթաները: 2020 ՍԹ-Վ ուղեցույցները, համեմատությունը նախորդ ուղեցույցների հետ
Օր 2	
10:00-11:30	Դասախոսություն Չափահասների ՍԹ-Վ կենսապահովման միջոցառումներ: Ցուցումները, հակացուցումները, դադարեցման ցուցումները, երկարատև ՍԹ-Վ-ի ցուցումները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք Տուժածի գննում և դեպքի վայրի անվտանգության ապահովում: Շտապ օգնության ահազանգում և ԱԱԴ ձեռքբերում: Անոթազարկի ստուգում: 30 սեղմում և 2 ներփչում շրջփուլերի մեկնարկ (ՍԹ-Վ): Կրծքավանդակի սեղմումների իրականացման տեխնիկան: Շնչուղիների անցանելիության ապահովման տարբերակները: Բերան-բերան, բերան-դիմակ, պարկ-դիմակ շնչառության տեխնիկան: Երկու փրկարարով չափահասների ՍԹ-Վ:
Օր 3	
10:00-12:00	Գործնական աշխատանք Ավտոմատացված արտաքին դեֆիբրիլատորի կիրառման տեխնիկան չափահասների և 8 տարեկանից բարձր երեխաների մոտ: Երկու փրկարարով ՍԹ-Վ՝ ԱԱԴ-ի կիրառմամբ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք 1 տարեկանից մինչև սեռահասունության տարիքի երեխաների 1 փրկարարով ՍԹ-Վ: Մեկ և երկու ձեռքով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով

	Երեխաների ՍԹՎ: Երեխաների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները: 1 փրկարարով մանուկների ՍԹՎ: Երկու մատով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով մանուկների ՍԹՎ: Երկու բութ մատով-ձեռքերով շրջանակած կրծքավանդակի սեղմման տեխնիկան: Մանուկների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները
Օր 4	
10:00-12:00	Գործնական աշխատանք 1-8 տարեկան երեխաների մոտ ԱԱԴ-ի կիրառման առանձնահատկությունները: Ընդլայնված շնչուղիներով ՍԹՎ առանձնահատկությունները: Չափահասների, երեխաների և մանուկների փրկարար շնչառություն: Անաֆիլակտիկ շոկի դեպքում ՍԹՎ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք Օտար մարմնով շնչուղիների խցանման մեղմացում բոլոր տարիքային խմբերում: Ջրահեղձում՝ ՍԹՎ: Հղիների հիմնական կենսապահովման առանձնահատկությունները: Նարկոտիկ-անալգետիկներով թունավորման դեպքում ՍԹՎ
Օր 5	
10:00-12:00	Գործնական աշխատանք Մահվան տարբեր դեպքերի և իրավիճակների քննարկում, ՍԹՎ հիմնական կենսապահովման գործողությունների իրականացում մասնավոր իրավիճակներում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Հիմնական կենսապահովման միջոցառումների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում: Ավարտական թեստավորում: Թեստերի վերլուծություն

Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ, բուժքույրեր, մանկաբարձներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի:

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյանին